

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ
 ԶՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ
 ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

Հ/Հ	Միջոցառումների անվանումները	Կատարող	Կատարման ժամկետը
1	2	3	4
1. Կանխարգելիչ միջոցառումներ			
1.	Ուսումնասիրել և գնահատել գետերի հունների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:	Համայնքների ղեկավարներ	Մինչև 15.03.2014թ.
2.	Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հունների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար:		Մինչև 15.03.2014թ.
3.	Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հունները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները:		Մշտական
4.	Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար:		Մարզի հիդրոոդերևութաբանական ծառայության պետ
5.	Տարվա ընթացքում ուժեղացնել հսկողությունը գետերի ջրի, ջրամբարների մակարդակի բարձրացման, օդի ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունների նկատմամբ: Կտրուկ փոփոխությունների ժամանակ անմիջապես ստացված տվյալները հայտնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:	Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ	Մինչև 15.03.2014թ.
6.	Նախապատրաստել համապատասխան քանակի տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև վառելիքաքսայուղային նյութերի պաշար՝ հարկ եղած դեպքում աղետի շրջանից բնակչության տարահանման և վերականգնողական աշխատանքներ կատարելու համար:	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ	Մինչև 15.03.2014թ.
7.	Նախապատրաստել միջոցներ՝ հարկ եղած դեպքում տուժածներին առաջին բուժօգնություն և բժշկական օգնություն ցույց տալու, անհրաժեշտության դեպքում՝ ստացիոնար բուժում կատարելու համար:	Լոռու մարզային	Մինչև
8.	Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները		

	և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկական և սարքավորումներով:	փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ	15.03.2014թ.
9.	Ճշտել արտակարգ իրավիճակներում գործելու և զինվորական մարմինների հետ փոխհամագործակցությունների պլանները:	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ	Մինչև 15.03.2014թ.
2. Հ ի մ ն ա կ ա ն մ ի ջ ջ ո ց ա ճ ու մ ն ե ր			
10.	Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ	Մշտապես
11.	Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:	Համայնքների ղեկավարներ	Անհրաժեշտության դեպքում
12.	Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը:	Տարահանման հանձնաժողովի նախագահ, համայնքների ղեկավարներ	Անհրաժեշտության դեպքում
13.	Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ:	Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ	Ըստ անհրաժեշտության
14.	Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ) ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների:	Համայնքների ղեկավարներ	Անհրաժեշտության դեպքում
15.	Ապահովել կապը աղետի շրջանում գտնվող համայնքների, հիմնարկ-ձեռնարկությունների և մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի միջև:	«ԱրմենՏել» ՓԲԸ Լոռու տարածքային կենտրոն	
16.	Գիշերային ժամերին փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները շարունակելու համար ապահովել համապատասխան լուսավորվածություն:	«ՀԷՏ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի տնօրեն	

«ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ»

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ